Արձանագրություն

Բնակարանային պայմանների ստուգման

08.12.2017թ.

Բնակարանային գործերի ամբողջականությունն ապահովելու և շահառուից ստացված տեղեկությունների հավաստիությունը ստուգելու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով. Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից ստեղծված «Զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային պայմանների» ուսումնասիրման հանձնաժողովը ներքոհիշյալ կազմով այցելեցին և ստուգեցին մահացած զինծառայող Վահե Մեհրաբի Մարգարյանի ընտանիքի բնակարանային պայմանները՝ փաստացի հաշվառված ՀՀ ք. Ջերմուկ, Զախափնյակ շ.25 բնN 31, երեք սենյականոց 40.6քմ բնակելի մակերես ունեցող բնակարանում:

Բնակարանային պայմանների ստուգման արդյունքում հանձնաժողովը արձանագրեց հետևյալը:

Պարզվեց, որ 05.08.2017թ. զինծառայության ընթացքում մահացած/ կցվում է մահվան վկայականի պատճեն, ՀՀ Պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության տեղեկանքը/ Վահե Մեհրաբի Մարգարյանի ընտանիքը՝ Ալեն Վահեի Մարգարյանը, Արգիշտի Վահեի Մարգարյանը, Վահե Մարգարյանի այրին՝ Լուսինե Ապրեսի Տոնեյանը/ կցվում է ամուսնության վկայականի պատճենը, Վահե Մարգարյանի նախկին կնոջից ամուսնալուծվելու վերաբերյալ վկայականի պատճենը, Լուսինե Ապրեսի Տոնեյանին՝ Ալեն և Արգիշտի Մարգարյաններին խնամակալ նշանակելու վերաբերյալ ՀՀ Ջերմուկ,համայնքի ղեկավարի 08.09.2017թ. N 231-Ա որոշման պատճենը/, Աքսաննա Հրայրի Տոնեյանը բնակվում են ՀՀ ք. Ջերմուկ, Զախափնյակ 25/31, երեք սենյականոց 40.6քմ բնակելի մակերես ունեցող Սուսաննա Սերգեի Իխտիարյանի սեփականությունը հանդիսացող վարձու բնակարանում: Լուսինե Ապրեսի Տոնեյանի որդին՝ Արթուր Հրայրի Տոնեյանը ներկա պահին գտնվում է զինծառայության մեջ/ կցվում է Վայքի զինվորական կոմիսարի տեղեկանքը/:

Ըստ հանձնաժողովի ուսումնասիրության մահացած զինծառայող Վահե Մեհրաբի Մարգարյանի ընտանիքը բաղկացած չորս շնչից / կցվում է շնչերի կազմի մասին տեղեկանքը/ հանդիսանում են բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր:

Ք. Ջերմուկ, Զախափնյակ 19/9 հասցեում գտնվող, Վահե Մեհրաբի Մարգարյանի հոր ընտանիքին պատկանող բնակարանում, որի սեփականաշնորհմանը մասնակցել է նաև Վահեն, բնակվում են մշտական 7 շունչ/ կցվում է շնչերի կազմի մասին տեղեկանքը/: Բնակարանը բաղկացած է երեք սենյակից, ունի 40.8քմ բնակելի մակերես/ կցվում է սեփականության վկայականի պատճենը/:

Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում պարզվեց նաև, որ Վահե Մեհրաբի Մարգարյանի այրի՝ Լուսինե Ապրեսի Տոնեյանի դիմումին կից ներկայացված են ինչպես վերոհիշյալ փաստաթղթերի պատճենները, այնպես էլ տեղեկանքներ կադաստրի պետական կոմիտեից, բնակչության պետական ռեգիստրի կողմից, ընտանիքի չափահաս անդամների անձնագրի պատճենները, ամուսնության վկայականի պատճեն:

Կայացած ուսումնասիրությունների արդյունքում հանձնաժողովը գտնում է,որ զինծառայության ընթացքում մահացած Վահե Մեհրաբի Մարգարյանի ընտանիքը հանդիսանում է բնակարանային պայմանների կարիքավոր և առաջարկվում է նրա ընտանիքը բաղկացած հոգու շնչից ընդգրկել բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ընտանիքների ցուցակում:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | | Ս. Մարգարյան |
| Հանձնաժողովի քարտուղար | | Ս. Կարապետյան |
| Հանձնաժողովի անդամներ | | Հ. Դավթյան |
| | | Տ. Վարդանյան |
| | | Ն. Հովհաննիսյան |
| | | Ս. Ասատրյան |

Ծանոթացա սույն ակտի բովանդակությանը----------

(ստորագրություն)

անուն ազգանուն